

նոյր նոքօք», ցուցնելու համար՝ թէ այդ տիտղոսներն իրապէս կրող անձինք աւելի չէին արժեր յաչս իրեն: Դարձեալ «զքոսն կարմիր եւ զվէրս նոցա՝» ազնուական կոչնականաց վրայ շողացող «զարդուց եւ ականց փայլելոց» տեղ կը համարէր: Եւ պարագայ մը, որ առանց թափանցելու այդ արքային բարեպաշտ հոգւոյն մէջ՝ խորշում պիտի պատճառէ, — եւ եթէ պատմիչն ալ չի չափազանցեր, — թագաւորական բաժակով ըմպելի կու տար անոնց. եւ «յորժամ թարախ վիրաց նոցա խառնէր ընդ զինւոյն», անոնց մնացորդը կ'առնուր ինք կը ճաշակէր (Ասող. 180—1):

Հայոց արքունիքն ունէր մեծարանաց ուրիշ ցոյց մ'ալ, որ ծանօթ է Արշակունեաց շրջանէն. այն է՝ պարգեւ տալ հրաւիրելոց: Այսպէս Պապ «ի ժամ ընթրեացն» հրամայեց «տանել պատմորձան սգուցանել» Դղակ մարդպետին, անշուշտ արքունի հանդերձատան մէջ, եւ հագուցին անոր «յրաստս եւ վարտիս» (Փաւս. 204): Այս պատիւն ամէն հոն ներկայից չի ըներ թագաւորը, այլ յիշեալ իշխանին միայն՝ զոր կ'ուզէ իբրեւ թէ աւելի եղանակաւ մը պատուել: Բայց թէ Դղակի եւ զածն արդիւնք էր սովորութեան մը, ոչ թէ զիպուածի, յայտնի է Ագաթանգեղոսի